



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



4137

45

281-6  
U-99

1865



# ԿԱՆՈՆԱԳԻՐ

Առաք

ԵՐՈՒՍԱԼԵՄԱՅ ՎԱՆԻՑ

1867

ՔԵՆԵԶ, ԵՎ ՀԱՅՈՏԱՅՆ.

Ո. ԶԵՂՈՅԻՆ ԵՐԵՄԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ


Մայ 199 Եկեղի մ. 9, ի նորարա.

1865

Կ. ՊՈՂՈ  
ՅՈՒԳՈՒԹԻՒՆ ՎՐԱՅԻԾ

1865

2816  
U-97



281.6  
U-97

# ԿԱՆՈՆԱԳԻՐ


Ս. ԵՐՈՒՍԱԼԻՄԱՅ ՎԱՆԻՑ

ՔՆՆԵԱ, ԵՒ ՀԱՍՏԱՏԵԱ.

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՔՆ

Մարտ 19ի ճիշտին մէջ, ի Կալաքա.

1865



Կ. ՊՈՂԻՄ  
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԵԱՆ

—  
1865

7225



Պատրիարքական կենով յը վաւերացեալ օրինակաց  
ճշգրտութիւնը երաշխառուեալ է:

2303  
40



# ԿԱՆՈՆԱԳԻՐ

ԽՈՒՐԲ ԵՐԱԿԱՆԱԿՄԱՑ ՎԱՆԻՑ

---

ՊԱՏԻԱՐՔ

1. Ազգային Սահմանադրութեան 17<sup>ῃ</sup> յօդուածին համեմատ՝ Երուսաղէմայ Պատրիարքը Ս. Յակոբայ Աթոռին ցկեանս Գահակալն է, միանգամայն Երուսաղէմայ վիճակին մէջ գուված ազգային ուխտատեղեաց և սեփականութեանց տնօրէնն ու Ս. Յակոբայ Վանից միաբանութեան Նախագահն է :

2. Երուսաղէմայ Պատրիարքին պարտաւորութիւնն է սոյն կանոնագրին տրամադրութեանցը համեմատ վարչիլ և անոր բարւոք զործադրութեանը հսկել, և ի հաստատութիւն այսմ կը պարտաւորի. Պօլսի Պատրիարքին պէս՝ իր պաշտօնին կոչված ատենը հանդիսաւորապէս ուխտել ազգային Երեսփոխանաց ժողովին ներկայութեանը :

3. Եթէ Պատրիարքը սոյն կանոնագրին հակառակ վարչի, ամբաստանութեան տակ կ'ընկնի ըստ 18<sup>ῃ</sup> յօդուածին Սահմանադրութեան :

4. Պատրիարքն ունի ընդ իր նախազահութեամբ Տնօրէն խորհուրդ մը որոյ աջակցութեամբը կը տնօրինէ Միաբանութեան վերաբերեալ գործերը :

Տնօրէն ԽՈՐՀՈՒԹԻՒՆ

5. Տնօրէն խորհուրդը կը բաղկանայ վեց միաբաններէ որոց մինէ Աւագ լուսարար զովող անձը, և՝ զորոնք միաբանից ընդհանուր ժողովը կ'ընտրէ և Պատրիարքը կը հաստատէ :

6. Այս խորհուրդը երկու տարին անզամ մը կը նորոգվի, և անդամները վերընտրելի են :

7. Տնօրէն խորհուրդին պաշտօննէ Միաբանութեան կրօնական, քաղաքական, ուսմնական և ելմտական գործոց տեսչութիւնը վարել Պատրիարքին հսկողութեանը տակ :

8. Տնօրէն խորհուրդը ամսէ ամիս կամ երբոր ուզէ հաշիւ պիտի պահանջէ Վանքին պաշտօնատարներէն և ամէն տարեգոււխ՝ որ պիտի ըլլայ Մայիս ամսին վերջը՝ Վանքին ընդհանուր հաշիւը պիտի պատրաստէ, զոր պիտի ստորագրեն Պատրիարքն ու բոլոր անդամքը և միաբանից ընդհանուր ժողովին պիտի ներկայացնէ, որն որ զանի վաւերացնելով Պէլսի հեղունական Վարչութեան պիտի ղըրկէ յատուկ տեղեկագրով մը :

9. Տնօրէն խորհուրդը՝ բաց ի նախազահէն որ Պատրիարքն է, պիտի ունենայ ատենապետ մը և ատենադպիր մը՝ զոր ինք իր անդամոց մէջէն կ'ընտրէ, և իր ատենական գոր-

ծողութիւնքը Սահմանադրութեան 85, 86 և 87<sup>ῃ</sup> յօդուածոց  
տրամադրութեանցը համեմատ պիտի կարգադրէ:

**10.** Եթէ Տնօրէն խորհուրդին անդամոց մեծագոյն մասը  
ներկայ չը գտիլի, եղած որոշմունքը օրինաւոր չ'են կրնար  
համարվիլ:

**11.** Տնօրէն խորհուրդին մէջ եղած որոշմունքը և ընտ-  
րութիւնքը միշտ գաղտնի քուէարկութեամբ պէտք է որ ըլլան:

**12.** Տնօրէն խորհուրդին որոշմանց գործադիրը Պատ-  
րիարքն է, որ իրեն եկած խնդիրները խորհրդին քննութեանը  
կը դնէ և յետոյ կը գործադրէ բաց ի քաղաքական գործոց այն  
ըստիսողական պարագաներէն ուր ինքնին կը տնօրինէ, յետոյ  
խորհուրդին՝ զանի հաղորդելու պայմանով: Նմանապէս իբրև  
պաշտօնական զլուխ Միաբանութեան՝ ինք ունի ուղղակի յա-  
րաբերութիւն տեղական իշխանութեան հետ և ասոր մատո-  
ցանելի Թագրիւնները իր կնքովը կ'ըլլան:

**13.** Եթէ Տնօրէն խորհուրդին ու Պատրիարքին մէջ տեղը  
անհամաձայնութիւն ծագի, միաբանից ընդհանուր ժողովին  
դիմել հարկ է. Եթէ այս ժողովն ալ չը կրնայ բառնալ անհա-  
մաձայնութիւնը, Կեղրոնական Վարչութեան դիմել հարկ  
կ'ըլլայ:

**14.** Տնօրէն խորհուրդը յատուկ պաշտօնատարաց ձեռօր  
կը մատակարարէ Միաբանութեան գործերը:

ՊԱՇՏՈՆԱՏԱՐՔ

15. Վանքին զլխաւոր պաշտօնատարքն են՝ Երուսաղէմայ Փոխանորդ ի Պօլիս, \*Պատրիարքական Փոխանորդ Վանքին մէջ, Աւագ լուսարար, Աւագ Թարգման, Ռւամբապետ, Դարպաստընկալ, Հիւրընկալ, Մատակարար, ևայլ որբան որ հարկ տեսնէ Տնօրէն խորհուրդը:

16. Բաց Աւագ լուսարարէն զոր միաբանից ընդհանուր ժողովը կ'ընտրէ, և մատակարարէն որոյ ընտրութիւնը ըստ Սահմանադրութեան վանօրէից հոգաբարձութեան կողմէն րվակ կը հարկաւորի, Տնօրէն խորհուրդը կ'ընտրէ Վանքին միւս պաշտօնատարքը և Պատրիարքը կը հաստատէ:

17. Երուսաղէմայ Փոխանորդը Պօլսի մէջ Երուսաղէմայ աթոռին օգտիցը պաշտօնական Թարգման և Վանքին զործակալն է, որ երեսփոխանապէս ըզ Միաբանութիւնը կը ներկայացնէ Կեղրոնական Վարչութեան քով:

18. Պատրիարքական Փոխանորդը Վանքին մէջ Պատրիարքին օգնական ու խորհրդականն է, որ ըստ հարկին ըզ Պատրիարքը կը ներկայացնէ անոր բացակայութեանը ժամանակ կամ անոր դըրկած տեղերը:

19. Աւագ լուսարարին պաշտօնն է ընդհանուր տեսչութիւն եկեղեցական մասին, և պահպանութիւնսրբազան անօթոց, հնութեանց և զարդուց:

**20.** Աւագ Թարգմանին պաշտօնն է միջնորդութիւն յարաբերութեանց՝ զոր ունի Վանքը տեղական իշխանութեան, օտար վանքերու և հիւպատոսներու հետ :

**21.** Ուսմնապետին պաշտօնն է ընդհանուր տեսչութիւն ուսմնական մասին, այսինքն հոգաբարձութիւն ժառանգաւորաց դպրոցին, տպագրատան, Թանգարանի և դիւանապետութիւն Տնօրէն խորհրդին :

**22.** Դարպաստընկալին պաշտօնն է ընդունել իներկայութեան խորհրդականաց ուխտաւորաց նուէրները և ասոնց կանոնաւոր հաշիւը բռնել :

**23.** Հիւրընկալին պաշտօնն է հիւրընկալել՝ զուխտաւորները և անոնց հանգստութեանը հոգ տանիլ :

**24.** Մատակարարին պաշտօնն է Վանքին բոլոր ծախքը հոգալ և անոնց կանոնաւոր հաշիւը բռնել :

**25.** Պաշտօնատարը՝ իւրաքանչիւրն իր մասին մէջ՝ համարատու են Տնօրէն խորհրդին և պարտաւոր անոր ամէն տնօրէնութեանցը հնազանդելու, Պատրիարքին իրաւասութեանը տակ :

ՄԻԱԲԱՆԻՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ.

**26.** Պատրիարքին նախազահութեամբը՝ Միաբանութիւնը ընդհանուր ժողովի մը մէջ կը գումարվի որ կը բաղկանայ իր բոլոր ներկայ գտվող միաբան Եպիսկոպոսներէ, Վարդապետներէ, Սարկաւագներէ և Կիսասարկաւագներէ, որոնք որ 25 տարին լրացուցած են :

**27.** Միաբանից ընդհանուր ժողովը կը գումարվի .

Նախ՝ Պատրիարքի ընտրութեան ժամանակ պատրիարքցուներու ներկայացման ցուցակը պատրաստելու համար, ըստ 21, 22 և 23 յօդուածոց ազգային Սահմանադրութեան. (Տես այս յօդուածները) :

Երկրորդ՝ Տեղապահի ընտրութեան համար ըստ 20<sup>ῃ</sup> յօդուածին Սահմանադրութեան:

Երրորդ՝ Աւագ լուսարարի ընտրութեան համար :

Չորրորդ՝ Տնօրէն խորհրդինանդամոց ընտրութեան համար :

Հինգերորդ՝ Երբ Տնօրէն խորհրդին անդամներէն մէկը ամբաստանութեան տակ ընկնի, պակսի կամ հրաժարի :

Վեցերորդ՝ Երբ Պատրիարքին ու Տնօրէն խորհրդին մէջ տեղ անհամաձայնութիւն ծագի :

Կօթերորդ՝ Տնօրէն խորհրդին ամէն տարի Մայիս ամսին

Այդ պատրաստած ընդհանուր հաշիւր և սընտուկին ելից ու  
մտից նժարը քննելու համար:

Ութերորդ՝ այնպիսի խնդիրներու համար որոց որոշումը  
բոլոր Միաբանութեան հանութեանը կը կարօտի, կամ Պատ-  
րիարքին առանձին, կամ Տնօրէն խորհրդին և կամ միաբա-  
նից մեծագոյն մասին առաջարկութեամբը:

**28.** Ընդհանուր ժողովն իր ամէն որոշմունքն ու ընտրու-  
թիւնը միշտ զաղտնի քուէարկութեամբ պիտի ընէ:

**29.** Քանի որ Ընդհանուր ժողովին բոլոր անդամոց մե-  
ծագոյն մասը ներկայ չը գտվի, որ և է որոշում վաւերական  
չը կրնայ համարվիլ:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՐԱՄԱԴՐՈՒԹԻՒՆՔ

**30.** Երուսաղէմայ Վանքը պիտի ունենայ ժառանգաւորաց դպրոցմը ուր պիտի ուսնին ու դաստիարակվին զանազան գաւառներէ ղրկված կամ բերել տրված հայազգի պատանիներ . որոց մէջէն եկեղեցականութեան յարմարութիւն և կոչում ունեցողները միայն կրօնաւոր պիտի ըլլան :

Սոյն դպրոցին ուսմանց հիմնագիրը Միաբանութեան կողմէն պիտի պատրաստվի , և 'զանի կեղրոնական Վարչութիւնը իր Կրօնական ժողովին և Ռւսմական խորհրդին ձեռօքը պիտի քննէ ու վաւերացնէ :

**31.** Վանքը պիտի ունենայ թանգարան մը ուր պիտի պահպին ձեռագիր և տպեալ մատեաններ և այլ որ չ ազգային հնութիւններ , և անոնց պահպանութեանը հոգ պիտի տարվի իպէտս և յօգուտ աշակերտելոց , միաբանից և Ազգին :

**32.** Վանքը պիտի ունենայ տպարան մը ուր պիտի տրպվին թէ Միաբանութեան և թէ Աղջին պիտանի և օգտակար դատիված զիրքեր և մասնաւորապէս թանգարանին այն հազուագիւտ ձեռագիրները զորս ի լոյս ընծայել պատշաճ համարի Միաբանութիւնը :

**33.** Վանքը պիտի ունենայ հիւանդանոց մը և ղեղարան մը , բժիշկ մը և ղեղազործ մը Միաբանութեան պիտոյիցը համար :

**34.** Վանքը պիտի ունենայ սընսոուկ մը ուր պիտի թափին թէ Պատրիարքին և թէ Տեսուչ զործակալաց ձեռօք զումար-

ված բոլոր հասոյթները : Այս սրնտուկին բանալին Տնօրէն խորհրդին յանձնըլիած է :

**Յ5.** Այս սնտուկին ելքն ու մուտքը յատուկ ժապաւինեալ տօմարներու մէջ պէտք է արձանագրեալ ըլլան, և հաշիւը օրինաւոր տօմարակալութեան կանոնով պէտք է բռնված ըլլայ :

**Յ6.** Վանքը մէկ տարվան մէջ յիսուն հազար դրուշ միայն փոխառութիւն պիտի կարենայ ընել, այս գումարէն աւելին ընելու համար Կեղրոնական Վարչութեան հաւանութիւնը պէտք է որ ստանայ :

**Յ7.** Վանքին բոլոր շարժական և անշարժ ըստացուածոց կանոնաւոր ցանկը շինվելով պիտի արձանագրվին յատուկ տօմարի մէջ Տնօրէն խորհրդին ձեռօր : Նմանապէս Վանքին կարւածագիրներն ու արտօնագիրները և Ֆերմանները Պատրիարքարանին մէջ յատուկ տեղ մը պիտի պահպին Տնօրէն խորհրդին հսկողութեանը տակ :

**Յ8.** Պատրիարքը և ոչ իսկ Միաբանութիւնը իրաւունք՝ ունին կալուած մը ձեռքէ հանելու մինչև որ Կեղրոնական Վարչութեան կողմէն հանութիւն չը տրվի, նոյնապէս և կալուած մը զնելու մասին՝ բաց այն ստիպողական պարագայէն ուր հանութիւն ըստանալու առթով վնաս կրնայ ծագիլ . բայց այսպիսի պարագայի մէջ զնումէն ետքը պէտք է իմաց տայ Պատրիարքը թէ միաբանից ընդհանուր ժողովին և թէ Կեղրոնական Վարչութեան :

**Յ9.** Միաբանից ժառանգորդը Վանքն ըլլալով՝ երբ որ միաբանից մէջէն մէկը վախճանի, անմիջապէս անոր խուցը

կը կնքվի, և 24 ժամ ետքը Տնօրէն խորհուրդը խուզը կը բանայ և ինչ որ հոն գտնէ ի զիր առնելով Վանքին ստացուածոց կարգը կ'անցնէ:

**40.** Վանքը ի նպաստ ազգային Կեդրոնական Վարչութեան մինչև ցարդ սովորաբար տուած տարեկան 18 հազար դրուշ դիւանական տուրքը առժամանակեայ պիտի շարունակէ տալու մինչև որ Սահմանադրութեան 93<sup>ր</sup> յօդուածին համեմատ զաւառական օրինաւոր հանգանակութեան բաշխման և հաւաքման եղանակները ազգային Երեսփոխանական ժողովին կողմէն որոշվին:

**41.** Վանքին առտնին կառավարութիւնը և միաբանից ըստ վարուց և ըստ բարուց բարեկարգ վիճակը Ազգին առջեւ Պատրիարքին ուղղակի պատասխանատութեանը տակ ըլլալով՝ Պատրիարքը իշխանութիւն ունի անհաւատարիմ գործակալ մը իր պաշտօնէն ձգելու և անոր տեղ ուրիշ մ'առաջարկելու, յանցաւոր բոնված միաբանը ըստ վանական կանոնաց պատմելու և վարձատրութեան արժանաւորը վարձատրելու թէ նիւթապէս և թէ բարոյապէս :

Նմանապէս ոչ ոք կրնայ միաբան զրվիլ առանց Պատրիարքին հանութեանը, և միաբաններէն ոչ ոք կրնայ փոքրաւոր կամ սպասաւոր առնուլ իր քով առանց հրամանի Պատրիարքին:

**42.** Պատրիարքին իրաւասութենէն է միաբանից մէջէն վարդապետ կամ սարկաւագ ձեռնադրել կամ ձեռնադրելու հրաման տալ, բայց պէտք է որ կրօնաւորութեան փափաքոյ անձին ըստ ուսմանց և ըստ բարուց արժանաւորութիւնը Տնօրէն խորհուրդին կողմէն հաստատեալ ըլլայ թէ Ռւսիապետին և թէ Խոստովանահօր վկայութեանցը վրայ :

**43.** Պատրիարքական իրաւասութենէն է, միաբանից մէջէն եպիսկոպոսութեան փափաքօղ վարդապետի մը ձեռնադրութեան վկայագիր տալ, բայց պէտք է որ եպիսկոպոսի մը նարկաւորութիւնը և նոյն վարդապետին արժանաւորութիւնը միաբանից ընդհանուր ժողովին կողմէն վկայեալ և հաստատեալ ըլլան:

Սրբազն կաթողիկոսին մատուցանելի սոյն վկայագիրը պէտք է որ իր կողմէն առանց արգելքի Պօլսի Պատրիարքին միջնորդութեամբը առարվի յէջմիածին:

**44.** Երուսաղէմայ Վանքին յարաբերութիւնքը այնպէս պիտի ըլլան Կեղրոնական Վարչութեան վանօրէից Հոգաբարձութեանը հետ որպէս կը պահանջեն սոյն մասին Սահմանադրութեան 48<sup>ր</sup> յօդուածին տրամադրութիւնքը . (Տես սոյն յօդուածը):

**45.** Ներկայ կանոնագիրը իր վաւերացման թրւականէն երկու տարի ետքը վերաբննելի է:

Ի դիմաց Ազգային Երեսփոխանական Ժողովին

Նորին Նախագահ եւ Պատրիարք Կ. Պօլսի


Տ. ՊՕԼՍ Ա.Ր.ՔԵՊ Ի.ՍԿՈՊՈՍ

Ի Պատրիարքական Հայոց

ի Կուսանակուազօլիս

19 Մարտ 1865











4137

